# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«22» հոկտեմբեր 2015 թվականի N:220 ք.Գյումրի

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՄՐԱՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈ ՓՈՂՈՑԻ 71Ա ՇԵՆՔԻ ԹԻՎ 56 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Կամո փողոցի 71ա շենքի՝ որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2003 թվականի դեկտմբերի 26-ի թիվ 1310170 վկայականը, հաշվի առնելով Գյումրու քաղաքապետի 2003 թվականի հուլիսի 14-ի թիվ 1020 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի «Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով վթարային դարձած և պետական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին» թիվ 116 որոշման 2-րդ կետի դրույթներով.

Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված և Գյումրու քաղաքապետի կողմից հատկացված Գյումրի քաղաքի Կամո փողոցի 71ա շենքի թիվ 56 մեկ սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ՝

Գևորգյան Թամարա Ղունգինի,
Մկրտչյան Մկրտիչ Վոլոդյայի,
Մկրտչյան Մարինե Սամվելի,
Մկրտչյան Վոլոդյա Սամվելի,
Մկրտչյան Աշոտ Վոլոդյայի,
Գրիգորյան Նարինե Ազիզի,
Մկրտչյան Հարություն Աշոտի
Մկրտչյան Թամարա Աշոտի:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է